3384

02 NOV 2007

Պրոլետարներ բոլոր յերկրների, միացեք

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ ԱՆԱՍՏՎԱԾՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹ. Խ. Հ. Ա. Մ. ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ
ԵՐԵՎԱՆ—1928

215
Խ-11

215
Ի-11

ՀԱՅՊՈԼԻԳՐԱՖԻ ԱՌԱՋԻՆ ՏՊԱՐԱՆ

Գրառեպ. 644 թ. պատվեր 2340 Տիրաժ 550

Ա
Ս 2440

ԿԱՆՈՆԱԳԻՐ

ԱՆԱՍՏՎԱԾՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ

(Մշակված տեղական աշխատավորների հետ ունեցած խորհրդակցությունների հիման վրա).

§ 1.

Անասուածների Միությունների Կենտրոնական Խորհուրդը հանդիսանում է իբրև ԽՍՀՄ անասուածների միությունները միացնող կազմակերպություն՝ բաղկացած 9 հոգուց, որոն ընտրվում է ԱՄ գավառային խորհուրդների ներկայացուցիչների կոնֆերենցիայում՝ մի գավառից մեկ պատգամավոր։ Այս կոնֆերենցիաները հրավիրվում են յուրաքանչյուր տարին մեկ անգամ։

ԾԱՆՈԹ.—Գոյություն ունեցող ԱՄԿ Խորհուրդը սույն կանոնադրությամբ որոշված ֆունկցիաները վերցնում է իր վրա։

§ 2.

Կենտրոնական Խորհուրդի ֆունկցիաների մեջ մտնում են՝

1. ԱՄ գավառային խորհուրդների հետ կապ պահպանելը, փոխադարձ ինֆորմացիայի և տեղական փորձը հաշվի առնելու նպատակով.

2. Տեղերի փորձերի հաշվառման հիման վրա, հակակրոնական պրոպագանդայի ձևերի, մեթոդների բովանդակության հարցերի մշակումը (ծրագրեր, թեզիսներ, մեթոդական ժողովածուներ և այլն).

ՀՍՍՀ ԳԱ ԳՐԱԴԱՐԱՆ
ՀՍՍՀ-ԱՄԻ ԿԳԿ
56237-66

11 SEP 2013

3384

3. Կենտրոնական ղեկավար հակակրոնական որդանների, նույնպես և վոչ-պարբերական հակակրոնական գրականության հրատարակումը.

4. Տեղական անասավածների միության անուանից ներկայացուցչություն ունենալ ՀՍԽՀ բոլոր կենտրոնական հիմնարկներում և կազմակերպություններում։

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ԱՆԱՍՏՎԱԾՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ

ՄԻՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

§ 1.

Անասավածների Միությունը իրեն նպատակ է դնում միացնել բոլոր գիտակից աշխատավորներին՝ կրոնի բոլոր տեսակների և ձևերի դեմ ակտիվ պայքար կազմակերպելու համար։

§ 2.

Նկատի ունենալով քաղաքի և մանավանդ գյուղի զգալի խավերի հետամնացությունը, ԱՄԸ իրեն նպատակ է դնում միության անդամների գիտակցության մեջ մտցնել հակակրոնական պրոպագանդա մղելու այնպիսի ձևի անհրաժեշտությունը, վորը նպաստեր Խորհրդային իշխանության հիմնական խնդիրների կիրառմանը, պրոլետարիատի դիկտատուրայի և գյուղացիության հետ ունեցած նրա դաշինքի ամրապնդմանը։

§ 3.

Այս նպատակով, միությունը

ա) Կազմակերպում է իր բջիջները գործարաններում, ֆաբրիկաներում, գիտնականների մասերում, կրթական հաստատություններում և գյուղերում։

ՊԵՏ. ԿԱՆ ԳՐԱԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ՀՍՍՌ-Арм ССР
56287·66

բ) Կազմակերպում է անկն տեսակի հասարակական պրոպագանդա (դասախոսություններ, խմբակներ, գրադարաններ, թանգարաններ, կուրսեր, կինոներ, թատրոնական ներկայացումներ) և ոժանդակում դրան։

գ) Նպաստում է լայն մասսաների մեջ անկրոն նոր կենցաղ մտցնելուն։

§ 4.

Անասավածների միությունն ոգտվում է իրավական անձի բոլոր իրավունքներով։

§ 5.

Անասավածների Միությունն ունի իր շտամպն ու կնիքը։

ՄԻՈՒԹՅԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԸ

§ 6.

Անասավածների Միության անդամ կարող է լինել ԽՍՀՄ ամեն մի քաղաքացի, վորն ոգտվում է լիակատար ընտրական իրավունքներով և հրաժարվում է կրոնից։

§ 7.

Անասավածների Միության ամեն մի անդամ պարտավոր է աշխատել Միության կազմակերպություններից վորևէ մեկում, ջանք և գործ դնում քաղաքականապես ավելի գրագետ լինելու և ակտիվ մասնակցելու Խորհրդային իշխանության հասարակական և կուլտուրական ձեռնարկումների կենսագործմանը։

§ 8.

Անաստվածների Միության բոլոր բջիջները ազատվում են նոր անդամներ ընդունելու իրավունքով։

Նոր անդամի ընդունելությունը տեղի չէ ունենում բջիջի ընդհանուր ժողովում՝ ձայների բաց քվեարկությամբ։

§ 9.

Անդամների վտարումը տեղի չէ ունենում, առաջին՝ կանոնադրության խախտման դեպքում, յերկրորդ՝ Անաստվածների Միության հեղինակությունը վարկաբեկելու դեպքում և յերրորդ՝ քրեական ընույթ կրող հանցագործությունների և վոճրագործությունների համար դատարանի կողմից դատապարտվելու դեպքերում։

Վտարումը կատարվում է բջիջի անդամների բաց քվեարկությամբ։

ԾԱՆՈԹ.—(§§ 8 և 9). Անդամների վոչ-ճիշտ ընդունելությունն ու վտարումը կարող է փոխվել ԱՄ գավառային խորհուրդների կողմից։

ԱՆԱՍՏՎԱԾՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ԲՋԻՋՆԵՐԸ

§ 10

Անաստվածների Միության կազմակերպության սկզբնական ձևը համարվում է բջիջը, վորը կազմակերպվում է քաղաքներում ըստ արտադրական հատկանշի՝ գործարաններում, ֆաբրիկաներում, հիմնարկներում, կրթական հաստատություններին կից և գյուղերում։

§ 11

Անաստվածների Միության բջիջ կարող է կազմակերպվել յերբ հինգ հոգի կան, վորոնք ցանկանում են և իրավունք ունեն լինելու Ա. Մ. անդամ։

§ 12

Բջիջը կազմակերպվում է՝ կուսակցական, կոմյերիտական, պրոֆմիությունների և հասարակա-քաղաքական կազմակերպությունների առանձին անհատների, ինչպես նաև Ա. Մ.-ի առանձին անդամների և առանձին բանվորների, գյուղացիների ու ծառայողների նախաձեռնությամբ։ Բջիջը գրանցվում է Ա. Մ-ի վերադաս որգանում։

§ 13

Բջիջի աշխատանքները ղեկավարելու համար ընդհանուր ժողովն ընտրում է բյուրո 3—5 անդամով՝ նայած բջիջի մեծությանն։

ԾԱՆՈԹ.—1. Տասը հոգուց պակաս անդամ ունեցող բջիջն ընտրում է միայն մի կազմակերպիչ։

2. Թե կազմակերպիչները և թե անաստվածների բջիջների բյուրոների անդամները չեն ազատվում այն աշխատանքներից, վոր կատարում են իրենց բուն աշխատավայրերում՝ հիմնարկություններում և ձեռնարկություններում։

§ 14

Բյուրոն ղեկավարում է բջիջների և խմբակների ընթացիկ աշխատանքները, պատրաստում է պլան Ա. Մ.-ի բջիջի աշխատանքի համար և հետևում նրա իրագործմանը, կազմակերպում է կապ կուսակցական և կոմյերիտական բջիջների, տեղական քաղլուսորգանների և Ա. Մ. վերադաս որգանների հետ և, ուսում

և բջիջի դրամարկղը մուծվող և բջիջին պատկանող գումարների ու նյութերի հաշիվները։

Բջիջի բյուրոն իր կազմից ընտրում է քարտուղար և գանձապահ։

§ 15

Բջիջի բյուրոն վերընտրվում է տարին յերկու անգամ և յերեք ամիսը մի անգամ բջիջի ընդհանուր ժողովում դնում է իր գործունեության հաշվետվությունը։

§ 16

Բջիջի միջոցների ծախսերի վերահսկողության, հաշիվների և գործավարության ղեկավարման, ինչպես նաև Ա. Մ.-ի վերադաս կազմակերպությունների դիրեկտիվների կատարման համար, բջիջի ընդհանուր ժողովում ընտրվում է վերստուգիչ հանձնաժողով 3 հոգուց բաղկացած։

Վերստուգիչ հանձնաժողովը վոչ ուշ, քան յերեք ամիսը մի անգամ բջիջի ընդհանուր ժողովի առաջ հաշիվ է տալիս իր աշխատանքների մասին։

§ 17

Բջիջի ընդհանուր ժողով հրավիրվում է վոչ ուշ, քան ամիսը մի անգամ։

§ 18

Անաստվածների Միության բջիջն իր ամենորյա աշխատանքների ընթացքում կիրառում է հետևյալ ձեռնարկումները՝ հիմնարկում, ձեռնարկում կամ գյուղում իր վրա յե վերցնում հակակրոնական պրոպագանդայի ամբողջ աշխատանքն ու նախաձեռնությունը, որացուցային ձև և մացնում իր աշխատանքների կատարման համար և իր բոլոր անդամներին քաշում աշխատանքների մեջ, նպաստում է անաստվածական կենցաղի պատվաստման, ներգրավում է Ա. Միությունը նոր անդամներ, տարածում է Ա. Մ.-ի բյուրոյի կենտրոնական որգաններն և ուրիշ հակակրոնական գրականություն ու հակակրոնական, պրոպագանդան մղելու համար միջոցներ և ստեղծում։

§ 19

Բջիջների միջոցները կազմվում են անդամավճարներից, (վորոնք սահմանված են տեղական պայմանների համաձայն՝ վոչ ավել, քան տարին մեկ ռուբլի) ժողովարարություններից, միանվագ մուծումներից, գրականության տարածումից, վճարովի ներկայացումներից, լերեկույթներից և այլն։

ԱՆԱՍՏՎԱԾՆԵՐԻ ՄԻՈՒԹՅԱՆ ՏԵՂԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

§ 20

Գավառի սահմաններում Ա. Մ. ընկերության ղեկավար մարմինն է հանդիսանում գավառային խորհուրդը, վորն ընտրվում է միության բջիջների ներկայացուցիչների գավառակային կոնֆերենցիայում։ Այդ կոնֆերենցիայի ներկայացուցիչներին ընտրում են միության բջիջները՝ 10—15 հոգուց բաղկացած։

Գավառակային կոնֆերենցիան հրավիրվում է վոչ ուշ, քան տարին մեկ անգամ։

§ 21

Գավառի սահմաններում գտնվող Անաստվածնե-

բի Միութիւնները միանում են և կազմում Անաստվածների գավառային Միութիւն, որի գլուխն և կանգնում գավառային խորհուրդը՝ ընտրված գավառակների ընկերութիւնների ներկայացուցիչների գավառային կոնֆերենցիայում՝ բաղկացած 15—20 հոգուց։

Գավառային կոնֆերենցիաները հրավիրվում են վոչ ուշ, քան տարին մեկ անգամ։

§ 22

Գավառակային ինչպես և գավառային կոնֆերենցիաները ընտրում են 5 հոգուց բաղկացած վերըստուգիչ հանձնաժողովներ՝ յուրաքանչյուրն իր համար։

ՄԻՈՒԹՅԱՆ ԼՈՒԾԱՐՔԸ

§ 23

Անաստվածների Միութիւնը կարող է լուծարքի յենթարկվել համապատասխան գավառակային կամ գավառային կոնֆերենցիաների վորոշմամբ։

§ 24

Անաստվածների Միութեան լուծարքից հետո նրա գույքն անցնում է անաստվածների միութեան վերադաս մարմնին։

Անաստվածների Միութեան Կենտրոնական
Խորհրդի Գործադիր Բյուրո

ՊԵՏ. ԿՈՆ ԳՐ-ԴԱՐԱՆ
ГСС Библиотека
ՀԱՍՍՌ-ԱԽՍՀ ԳՍՓ
Հան. Ա. Միքայելյան
Ս. ԵՐԵՎԱՆԻ ԱՆՎԱՆ

ՀՀ Ազգային գրադարան
NL0158368

Ca

807

1

1

БИБЛИОТЕКА
ИНСТИТУТА
ВОСТОКОВЕДЕНИЯ
Академии Наук
СССР